

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

<b>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</b>	0902 «Բաց լեռնային աշխատանքներ» Լեռնային տեխնիկ-տեխնոլոգ
<b>Պերը</b>	Լեռնային տեխնիկ-տեխնոլոգը պետք է կարողանա անվտանգ, անխափան և կենսագործունեության կանոններին համապատասխան իրականացնել բացահանքի արտադրական գործընթացները ստ հանձնարարված առաջադրանքների:
<b>Խնդիրների բնագավառ 1</b>	Կարողանա ապահովել լեռնային զանգվածի հանույթին նախապատրաստման իրականացումը:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Լեռնային տեխնիկ-տեխնոլոգը համաձայն առաջադրանքի իրականացնում է լեռնային զանգվածի քայքայման համապատասխան աշխատանքները:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• տեղանքում պայթուցային հորատանցքերի տեղը նշված է</li> <li>• հորատված հորատանցքերը պայթուցիկ նյութով և խցանյութերով լիցքավորված են</li> <li>• պայթեցման ցանցը կազմված է</li> <li>• պայթեցման աշխատանքների անվտանգության պահանջները պահպանված է</li> <li>• պայթեցման աշխատանքների արդյունքները ներկայացված է</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2</b>	Կարողանա ապահովել հանութաբարձման աշխատանքների իրականացումը:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Լեռնային տեխնիկ-տեխնոլոգը համաձայն առաջադրանքի իրականացնում է հանութաբարձման համապատասխան աշխատանքները:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• հանութաբարձող սարքը հանքախորշում տեղադրված է</li> <li>• հանութաբարձման սխեման համաձայն առաջադրանքի պահպանված է</li> <li>• հանութաբարձող սարքի աշխատանքի արդյունավետությունը ապահովված է</li> <li>• հանութաբարձման աշխատանքների անվտանգության պահանջները պահպանված է</li> <li>• հանութաբարձման աշխատանքների արդյունքները ներկայացված է</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3</b>	Կարողանա ապահովել տրանսպորտային աշխատանքների իրականացումը:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Լեռնային տեխնիկ-տեխնոլոգը համաձայն հանութաբարձման ծավալների իրականացնում է ապարների տեղափոխման աշխատանքները:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• տեղափոխող սարքը փոխկապակցված է</li> <li>• տեղափոխող սխեման համաձայն առաջադրանքի պահպանված է</li> <li>• տեղափոխման սարքերի աշխատանքի արդյունավետությունը ապահովված է</li> <li>• տեղափոխման աշխատանքների անվտանգության պահանջները պահպանված է</li> <li>• տեղափոխման աշխատանքների արդյունքները ներկայացված է</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 4</b>	Կարողանա ապահովել լցակույտաձևավորման աշխատանքների իրականացումը:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Լեռնային տեխնիկ-տեխնոլոգը համաձայն տեղափոխված մակաբացման ապարների ծավալների իրականացնում է լցակույ-

	տաձևավորման աշխատանքները:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• լցակույտձևավորող սարքը ընտրված է</li> <li>• լցակույտձևավորման սխեման համաձայն առաջադրանքի պահպանված է</li> <li>• լցակույտձևավորման սարքերի աշխատանքի արդյունավետությունը ապահովված է</li> <li>• լցակույտձևավորման աշխատանքների անվտանգության պահանջները պահպանված է</li> <li>• լցակույտառաջացման աշխատանքների արդյունքները ներկայացված է</li> </ul>
<b>Պատասխատվությունը-բարդության աստիճանը</b>	
<b>Բարդության աստիճանը</b>	Պարզ և միջին բարդության
<b>Պատասխատվությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• լեռնային տեխնիկ-տեխնոլոգը պատասխանատու է համաձայն առաջադրանքների արտադրական գործընթացները որակյալ կատարելու համար</li> <li>• նյութերը ինսյոդաբար օգտագործելու համար</li> <li>• համաձայն առաջադրանքի բանվորներին ճիշտ հանձնարականներ տալու համար</li> <li>• առաջադրանքների արդյունքների թերակատարման կամ չկատարման համար</li> <li>• առաջադրանքների չկատարման թերությունների վերացման համար</li> </ul>
<b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b>	
<b>Լեզուներ</b>	հայերեն - գերազանց երկու օտար լեզու - բավարար
<b>Համակարգիչ</b>	MS Word - բավարար, MS Excel` բավարար:
<b>Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ընդհանուր երկրաբանություն,</li> <li>• Բաց լեռնային աշխատանքների հիմունքներ,</li> <li>• Սպարների ֆիզիկա,</li> <li>• Աշխատանքի պաշտպանություն,</li> <li>• Գեոդեզիա և մարկշեյդերական գործ,</li> <li>• Լեռնային մեքենաներ և սարքավորումներ,</li> <li>• Բացահանքի արտադրական գործընթացները:</li> </ul>
<b>Կարողությունները, հմտությունները, վերաբերմունքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• լեռնային մեքենաների և սարքերի աշխատացնելու կարողություն,</li> <li>• անհրաժեշտ մեքենաները և սարքերը համապատասխան գործընթացներում ընտրելու կարողություն,</li> <li>• մասնագիտական և տեղեկատու գրականությունից օգտվելու ունակություն,</li> <li>• զծագրեր և սխեմաներ կարդալու կարողություն,</li> <li>• առաջադրանքների թերակատարման պատճառների բացահայտման հմտություն,</li> <li>• առաջադրանքների թերակատարման պատճառների վերացման կարողություն</li> <li>• կատարված աշխատանքների արդյունքների ներկայացման հմտություն</li> <li>• հանձնարարականներ տալու կորողություն</li> <li>• պարտաճանաչություն,</li> <li>• կարգապահություն,</li> <li>• հաղորդակցվող,</li> <li>• ինսյոդ,</li> <li>• ճշտապահ,</li> <li>• հումորի զգացում ունեցող,</li> </ul>

	• նորը ընկալող:
--	-----------------

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ԲԱՅ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿ-ՏԵԽՆՈԼՈԳ»

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

«Լեռնային տեխնիկ-տեխնոլոգ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. Պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 60 հարցից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 90%-ին: